

ԽՈՐԵՆԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Քրիստոնեութեան Հայաստանի պետական կրօն հոչակման 1700-ամեակը պատճառ Կ'ոլլալ թէ՝ Հայաստանի, և թէ՝ արտասահմանի մէջ, որ տեղի ունենան զանազան ձեռնարկներ, ինչպէս՝ եկեղեցաշինութիւն, պատմական վաճերու կամ եկեղեցիներու վերանորոգում, գիտական համաժողովներ, ուստագնացութիւն, ասլերու և գիրքերու հրատարակութիւն, մշակութային և գեղարվեստական հանդիսութիւններ, համաշխարհային ցուցահանդէսներ և այլն և այլն:

Կը խորհիմ, որ կրօնական այս դարադարձը ըլլալ նաև խթանող ուժը հայկական սրբազն և հոգնոր երածշտութեան պողքելումին, տեսակ մը երկնումին, նորաստեղծ ու ինքնածին Պատարագներու կատարմանը, որոնք կը կազմեն մեր ազգային հարստութիւնը:

1956-ին, երբ գրութեամբ մը կ'արտայալուէի Եկմալեանի մշակումով Պատարագին մասին, Կ'ըսէի. «Հարցը շատ պարզ և անվիճելի պիտի ըլլար, եթէ մեր եկեղեցական օրէնքները թույատրէին, որ բազմապիսի եղանակնեռով, այլ և այլ երաժիշտներէ պատրաստուած պատարագներ ունենայինք... երբ ազատութիւն չունին (երաժիշտները) բոլորովին նոր մը շարադրելու...», աւելի հետու, «կը երական դասուն այս ցոյց տուած ոչ քաջալերական ընթացքը և սեղմումները»:

Երշամկայիշատակ Վեհափառ Հայրապետ Վազգէն Ա, որ ոչ միայն Ծինարար էր, այլև գեղագէտ, գեղապաշտ, երածշտաւաէր, իսկական երաժիշտ և, եթէ չեմ սխալի՛ երածշտանոցէ վկայեալ, մեծապէս զնահատեց Պարթևեանի վերամշակած Եկմալեանի Պատարագը՝ 1956-ին իր առաջին հովուապետական այցելութեան ընթացքին Փարիզ և նոյնապէս անոր յօրինած Պատարագ-օրաթօրիօն ու Fa Minceur, և իր իսկ հրաւրով, իր հովանաւորութեան տակ մեկնաբանուեցաւ Երևանի մէջ 24 նոյեմբեր 1963-ին:

Հետևաբար, Վեհափառ Հայրապետը սիրեց երածշտական նորութիւնները, ծիսական թէ սրբազն, հաւաքեց Ս. Էջմիածնի շուրջ՝ լաւ ձայնով իգական և արական մենակատարներ, ունկնդիր եղաւ, քաջալերեց, ճամբար բացաւ նոր յօրինումներու, ինչպէս «ԽՈՐԵՆԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ»-ին:

Խորէնեան Պատարագը, գրուած 1984-ին, երրորդ և վերջիան է Եկմալեան և Կոմիտասեան մշակումով հանրածանօթ Պատարագներուն:

Օստ հետաքրքրական է, երբ յօրինող երաժիշտը մը ինքն իսկ կը բացատրէ, կը պատմէ իր ստեղծագործութեան զանազան մերշնչումներուն փովերը: Դժբախտաբար առյա առիթը չումիմք գիտնալու, այս վերջիններէն զատ, թէ ինչպէ՞ս, թէ ի՞նչ պայմաններու տակ, Զիլիմկիրեան մը, Այտինեան մը, Աթմանեան մը կամ Մանաս մը յօրինած են իրենց գործերը:

Որպէս վկայութիւն կամ երածշտաւաէր որոշ խաւերու հասցեագրուած ու հոգևոր երածշտութեան պատմութեան համար, կը խորհիմ, թէ հետաքրքրական կրնալ ըլլալ արձանագրել երաժիշտ-երգահան Խորէն Մէլիսամենեանի իմծի ուղարկած երիգի վրայ արձանագրուած իր անկեղծ ու զգացական քանի մը բացատրութիւնները, որոնց մէջ պատմական Կ'ընէ մեր նորաստեղծ «ԽՈՐԵՆԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ»-ին:

Ամսաւայիկ այսպէս կ'արտայալունք Մէջամնենան 1985-ին.

«Բարեն, սիրելի եղբայր Տոքտ. Մոմծեան,

Կարպիսին միշոցով տեղակացայ, որ ցանկութիւն ունիք իմ գրած Պատարագի երիզը (գասէթը) ունենալ: Բայական դժուարութիւններով կարողացաւ ձևով մը գրել այս: Թէ և շատ յաջող չէ: Առացուել արտատպած տարրերակը, աական կարծում եւ, որ զաղափար մը կու տայ գրած աշխատանքին մասին:

Ցանկանում եմ մի բանի խօսք ասել այդ մասին, յատկապէս Պատարագի ստեղծման աշխատանքների, ինչպէս նաև անոր անհրաժեշտութեան մասին:

Տարիների ընթացքում երազկլ էի, որ Էշմիածնում երգուի կամ կատարուի Պատարագ մը, որ ստեղծուած լինի նայ զեղողու երգի ակունքներից սերուած, Պատարագ մը, որ կարող էր որևէ գիտական նպանս բնրել երաժշտական կեարին մէշ:

Եւ ահա ինչպէս ստեղծուեց այս գործը:

Սոլօներու շարքը, որ սօլիստներէն մէկը դանդաղ կ'երգէր, Վազգէն Վեհափառ Հայրապետը կարգադրեց, որ թի մը յորդոր երգէ: Սօլիստին բացատրելուց յետոյ նա նորից շարունակեց դանդաղ երգեցողութիւնը: Այս խանգարիչ հանգամանքը ճշգրտելու համար, փորդիկ մշակում մը կատարեցի և սովորեցուցի եզչախումբին: Վեհափառ Հայրապետը շատ բարձր զնահատեց այն և կարգադրեց, որ ստեղծած այդ գործին նախորդ համարն ալ փոխեմ և կատարեն Պատարագի ընացքին: Եւ այսպէս, գրեցի նաև նախորդող համարը: Վեհափառ Հայրապետը նորից տուա իր համապետին և ասաց բնակեալիք. «Խորէ՛՛ն, Աստուած երրորդութիւն կը միրէ. եթէ քեզ յաջողուի ասոր յաջորդ մասն ալ գրել, Սուրբ Պատարագի երգեցողութեան մէշ պիտի ստացուի զեղեցիկ երրորդութիւն մը, որը կը շարունակէ մէկը միասին»:

Այդ նոյնակա գրեցի, որն էր՝ «Տէր, ողորմնաւ-ն, և այսպէս, երբ յաջողեցաւ այդ գործը նոյնակա, Վեհափառը կանչեց իր մօտ, յանձնարարեց, որ ստեղծնեմ Պատարագ մը այս ոռով, հայ գեղոցու երգի ոռով, և մանաւան շարակամատիա: Վազգէն Վեհափառն ասաց այն մասին, որ շտապել պէտք չէ, դա կարող է տևել մէկ տարի, երկու տարի, երեք տարի և նոյնիսկ անելի:

Ես ասացի Վեհափառ Հայրապետին. «Վեհափառ Տէր, մենք ունենք Կոմիտասեան Պատարագ, Եկմալեան Պատարագ, անհրաժեշտութիւն կա՞յ արդեօք, որ երրորդը ստեղծուի»: Վեհափառ Հայրապետը պատասխանեց. «Խորէ՛՛ն, դուն երաժիշտ ես, շատ լաւ գիտես, որ օտարներ ունեն բազմաթիւ Պատարագներ՝ տասը, տասնիններ, քսան, գուցէ և աւելին. հ՞ոչ կը լինի, որ հայ ազգը ունենայ երրորդ Պատարագ մը ևս, որևէ մէկը մնայ չի գործեր այդ բանին համար»: Եւ այսպիսի ոգևորիչ խօսքերից յետոյ ես անցայ տքնաշան աշխատանքի 1980 թուականի Հոկտեմբեր ամսից:

Բոյոր կտորները, որոնք մէկ առ մէկ կը գորուէին իմ կողմէ, կը սրբեցնէի երգչախումբին, կը տանեի Էջմիածնի Մայր Տաճար և Կիրակի օրերը Պատարագի ընթացքին կը ցուցադրէի Վեհափառ Հայրապետին:

Պատարագէն յետոյ, Հայրապետը միշտ կը կանչէր իհաճ իր քովը և կու տար իր տպատրութիւնները լսած կտորներուն մասին. «Խորէ՛՛ն, այսուեղ այսինչ կտորը թիշ մը այլապէս ըլլալու է, այսինչ կտորը թիշ մը տեղը չէ նատած»: Ես նորից կ'աշխատէի այդ գործին վրայ, այդ դիտողութիւններին և վերջապէս անոնց բաւարա-

րութիւն տալէ ետք. Վեհափառը երբ կը հաւանէր, կ'ըսէր. «Խորէն, կատարեալ է, անցի՛ր առաջ»: Եւ կը ստեղծուեր յաշորդ գործը: Եւ այսպէս, ես յիշում եմ «Սուրբ, Սուրբ»-ի ստեղծագործութեան ընթացքը: Երբ եկաւ «Ովսաննա»-ներու բառերու բաժինը՝ Վեհափառ Հայրապետը ինձ յանձնարարեց և ասաց. «Ովսաննա»-ները թող առանձին-առանձին ձայներուն ընդուչէն բխին», զաղափար մը, որ հետաքրքիր էր ինձի համար: Ես եկաւ, հիմնովին փոխեցի գրածն և «Ովսաննա»-ները տալով մէկ պասօներուն, մէկ ալթօներուն, մէկ թէնօրներուն, մէկ սօփրանօներուն, ստեղծուեց բոլիփօնիք ոճով գործ մը, որը յաշողուած կարելի է համարել:

Հետաքրքրական է նաև «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցա» գործի ստեղծումը: Վեհափառ Հայրապետը տուալ ինձ այն գաղափարը, որ Քրիստոսի մեր մէջ յայտնուեցը հաւատացեալ մեր ժողովուրդին համար մեծ գաղափար մըն է, և շսաւ ինձի: «Խորէն, այս համարը պէտք է լինի կատարեալ, վերին աստիճանի ոգևորող և ուրախ»:

Նստեցի և ստեղծագործեցի «Քրիստոս ի մէջ» և «Ողջոյն» համարները, որոնք նոյնական բօլիփօնիք ոճով գրուած գործեր են և կարծում եմ, որ շատ հեշտ է սորվեցնել երգչախումբերուն, չնայած այն բանին, որ բարդ կը թուի: Զայնատարութիւնները առ հասարակ ողջ Պատարագի ընթացքին ես կատարել եմ այնպես, որ բոլոր սիրողական երգիշները կարողանան կատարել, բոլորը գրուած են շարականային երգեցողութեան սկզբունքներով:

Մենեկիմերը ստեղծուած են հնադարեամ ոճով: Ես կարող էի նոյնական գրուածական, աշուղական Սայաթ-Նովայի ժամանակաշրջանի երգեցողութեան ոճը օգտագործել, բայց ես ուզեցի գեղջուկ երգեցողութիւնը ընտրել իբրև առաջնորդող ոճ ինձ համար, և միշտ հարազատ մնալ ուզեցի այդ ոճին: Կարծում եմ, որ ինձ յաջողուել է այդ անել:

Գալով ստեղծագործութեան բովանդակութեան սիմելին, դեքստի հետ առնչուող հարցերին, աշխատեցի հարազատ մնալ դեքստին բովանդակութեանը, յատկապէս հայկական շեշտադրութեան սկզբունքին: Գաղտնիք չէ, որ հայերէն շեշտը միշտ համընկնում է բարի վերջին վաճկի ձայնատրին վլայ, և որ երածշտութեան շեշտը անպայման պէտք է նոյնական խօսի դեքստի շեշտի հետ: Զոր օրինակ, բարեխօսութեամբ, մօր քո և կուսի՛, ընկալ գաղաչա՞նս քոց պաշտոնէի՛ց, ինչպէս շեշտադրութեամբ որևէ ձևով, տևողութեան երկարացման սկզբունքով և կամ փոքրիկ բօրդամէնթօներով (իմա՞ մէկ հնչիմեն միաը սահմունօրէն անցնելու կերպ - Լ. Մ.): Կամ ան ինչո՞ւ չէ, աքսէնթներով (շեշտ), և միշտ այս մոխմախը (պահի) պէտք է նկատի ունենայ ստեղծագործողը: Ես շանացել եմ այդ ամել, այդ սկզբունքը պաշտպանել Պատարագի սկզբից մինչև վերջը, բոլոր համարների մէջ:

Յատկանշական մէկ ուրիշ կողմ ստեղծագործութեանց շարքի մէջ: Ասեմ, որ նախադասութիւններ կան, որոնք պատմողական են: Զոր օրինակ՝ «Որ հանապազ կերակրես զմեզ» այսպիսի պատմողական նախադասութիւնների մէջ, աշխատեցի մտածել, այնպէս ամել, որ երածշտութիւնը նոյնական լինի պատմողական բանոյիք: Երբ պատմողական նախադասութիւնը վերջանալուց յետոյ գալիս է աղաչական, խնդրողական մէկ ուրիշ նախադասութիւն, զոր օրինակ՝ «առաքեա՞ն ի մեզ զինգնոր քո զօրինութիւն», այսուղ, ինչպէս տեսնում ենք, կան խնդրողական, աղաչական

նախադասութեան ձևեր, որոնք երածշտութեան մէջ նոյնպէս պէտք է ունենան իրենց խնդրողական, աղաչական ձևերը:

Այսպիսի, ևս կ'ասէի՝ զիտական հարցերը նոյնպէս նկատի ունենալով, ստեղծել եմ այս գործը: Կարծում եմ, որ մեր ականջները վարժուած են աւելի շատ Եկմա-լիամի Պատարագի երգեցողութեամբ, բայց իրարանշիր ստեղծագործութիւն լսելով է դառնուա հարազատ, և եթէ մեր ականջները նոյնպէս վարժուեն, որ կը դառ-նայ մեզ համար հարազատ երգեցողութիւն: Դա ասում եմ իմ փորձից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաների փորձից, որ սկզբնական շրջանից իրենց ականջներուն միշտ խորը կը բուէր ստեղծագործութեան կատարումը, սակայն վերջին շրջանի ինձ մօտենում էին և ասում. «Մաէսթրօ, ձեր գրած Պատարագը դարձել է չափազանց շատ հարազատ մեզ համար: Զարմանալի էր, որ սկզբում մենք չէինք հասկանում Պատարագի խորութիւնը, թարմութիւնը, հայաշունչ ոճը և աղօթքի ողին: Պատարագը խորապէս թափանցկ է: Մեր հոգիների մէջ»: Թերևս այս եր պատճառը, որ Ամենայն Հայոց Վազգեն Վեհափառ Հայրապետը կարգադրեր էր, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանքին մէջ երգուեն երեք Պատարագները, մէկ կիրակի՝ Կոմիտաս, լաշորդ՝ Ծկմալեան, և երրորդ կիրակի՛ Խորէնեան և այսպէս ամբողջ տարին շարունակ:

Ամա այսպիսի մի քանի մեկնաբանութիւններն էին, որ ուզում էի յանձնել քու ուշադրութեանը, սիրելի Լուս: Ես կարծում եմ, որ մեզ՝ հայերիս համար իրարան-շիր մի աշխատանք, որ կատարում է Հայ Ազգի հոգենէն աշխարհէն ներս, որ լինի Մայր Հայուննիքի այսօրուայ ծաղկուն շինարարութիւնը, դա լինի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարներից ներս եղած շինարարությունը և կամ որևէ մի կառուցի ստեղծումը, դա լինի մշակութային հոգևոր կեանքի մէջ, մեզ բոլորիս համար ուրախացնող երևոյթ է: Ես ամէնից շատ ուրախանում եմ այս տեսանկինից:

Ստեղծագործութիւնը աւարտուեց 1983 թուականին և կատարեցինը Մայր Տաճա-րին մէջ, Հայաստանի Պետական կոնսերվատորիայի երածշտագէւնների յանձնա-խումբի առջև, որի նախագահն էր կոմիտասացէտ, Փրոֆ. Ռոպերթ Աթայեանը, Մար-գարիտ Բրուտեան՝ նոյնպէս փրոֆեսէօր և Մանուկ Մանուկեանը՝ տողենորդ: Այսուղե կային նաև այլ երածշտագէւններ՝ իրադիրուած Վեհափառ Հայրապետի կողմէց:

Բոլորի կողմէց արժանացալ հաւանութեան, որոշ սրբազրութիւններ, փոփոխու-թիւններ առաջարկուեց: Յետազային դրանք նոյնպէս կատարեցի: Քեզ ուղարկած տարբերակը ուրեմն վերջնական տարբերակն է: Ուրախ եմ քեզ լայտնելու, որ 1984-ի Հոկտեմբերի 20-ի Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնհակով արտօնուեց այս գործը կատարելու Հայաստանաց Առաքելական բոլոր Եկեղեցիներուն իրոն Խորէնեան Պատարագ:

Լուս չան, որու իմ հարազատն ես և կարծում եմ, որ որու նոյնպէս շատ պէտք է ուրախ լինես այս ստեղծագործութեան գրելուն համար:

Ցանկանում եմ քեզ նոյնպէս առողջութիւն, յաջողութիւն քո ստեղծագործական և կատարողական կեանքուն: Իրաքանչիւրս, որ կու զանք հիմք նման այս աշխարհի երեսին, կ'ապրինը և մեր մի փոքրիկ լուսան պարտաւոր ենք դեղնու և ալիպէս թեռանալու այս աշխարհից. սա է իրամայական պահանջը հայ ազգին: Եւ

նրէ չենք անում այդ, դա չի կարող ներել Ինքը՝ Աստուած: Այս սկզբունքն է ինձ առաջնորդում ամենից առաջ, ո՞չ թէ փառքը, ո՞չ թէ իմ անուան տարածումը և այլն:

Իմ խորին շնորհակալութիւններն եմ յայտնում ձեր բոլորին, բոլոր նրանց, ովքեր կարող են ինձ ունենալու»:

Հարկ է ընդունիլ, որ խորէն ՄԵԼԻՍԱՆԵՆԵԱՆ, գուտ երաժշտական տեսակէտով կամ իմաստով, բացադիկ և արտասովոր պայմաններու մէջ սկսած է ստեղծագործել իր Պատարագը: Ունենալով իր տրամադրութեան տակ արինեստավարժ երգչախումբ, եկեղեցական հօգոր մթնոլորտ և միանգամայն հոգեկան օրհաւոր մոհիշ ոյժ ու քաջակրոնք Երշամկայիշատակ Վեհափառ Հօր՝ Վազգէն Ա-ի և, վերջապէս, իր maître de chapelle-ի հանգամանքը և առաւելութիւնը, ինչպէս եղած են ընդհանրապէս 16-րդ, 17-րդ դարերու երդուական սրբազն երաժշտութեան տիտանները:

Այս ազդակները անկասկած իրեն մեծապէս օգնած են, սակայն պէտք չէ մոռնալ, որ դժուար կրնայ եղած ըլլալ ձերբազատուիլ ուրիշ Պատարագի մը երաժշտութենէն և թէ իր ենթագիտակցութեան մէջ՝ ազդուած չըլլալ Եկմալեամի մշակումով Պատարագէն և «արդէն իմացած»-ի տպաւորութիւն չտալու համար:

Կայ ճակ մետալին հակառակ երեսը և կարևոր է Ակատի ունենալ այդ ժամանակուան պայմանները, զորս Մայր Աթոռի միաբանութեան իր աշակերտներէն մէկը, այսօր Զենոր Քին. Նալպանտեան կ'արտապայտէ հետևեալ խօսքերով.

«Համայնավարութիւնը իր աղէտաքեր ծնունդէն մինչև իր արժանի վախճանը՝ շատ ծանր կշոնեց հայութեան վրայ: Զանգուածային սուր ու անդույ հաղածանքներու շարան մը շղթայզերծուեցաւ կրօնքի դէմ: Առ հետևեան այս աննպաստ ու վտանգաւոր դիրքաւորումին՝ դժիսարարոյ ու աննկարագիր մարդիկը անտեղի արսորմնը կազմակերպեցին ու հազարաւոր անմեղունակ կեանքեր հնձեցին: Հայոց սուրբ կրօնը կատաղօրէն հալածուեցաւ, իր բանիմաց սպասաւորները՝ կրօնաւորմներն իրենց աչքերը փակեցին մուլք զատաններու և կամ սառնամանիքներու մէջ: Այս ամիրաւ հալածանքէն ոչ ոք զերծ մնաց, ո՞չ բարի ու շինարար հաւատացեալը, ո՞չ խոնարի ու ծառայակէր քահանան, և ո՞չ ալ ազգին նուիրեալ. Վազգէն Վահափառ Հայրապետը: Այսպիսի դժոնակ ու անբաղձակի տարիներուն էր, որ Պարոն Խորէնը լծուած էր սուրբ ու նուիրական աշխատանքի մը, Պատարագի յօրինման: Պատարագ գրելը յանդկութիւն էր այդ տարիներին: Ան ի զին ամէն զոհողութեան, վճուած էր զուխ հանել անկարելին, ապահնելով Նախախնամութեան պարզւած ոյժին ու պաշտպանուեան, արհանարինած էր խոշըմուտներն ու ՍՊԱՌՆԱԼԻ Քմերը ժաման էր ցուցադրելու հոգեկան արիութեան և պատասխանատուութեան զգացումին»:

Խորէն ՄԵԼԻՍԱՆԵՆԵԱՆ ստեղծագործութեան մէջ կայ զանազանութիւն առանց տափակութեան ու խուսափում կրկնութիւններէ: Կայ ճաշակ, մուրք զգայնութիւն և դաշնաւորման վիրանք:

«Բարեխօսութեամբ»-ը հանդիսաւոր և վենի երաժշտութիւն մըն է, թէ՝ մեղեդիական, և թէ՝ դաշնաւորման իմաստով յաջող հիւսուածք մը:

Նորութիւն է «Քրիստոս ծնա» կամ «Յարենա»-ը իր յաջորդական, հետևողական և պարտադիշ, բազմից նույն յատկանշական ներկու բառերուն» կրկնութիւններով, ինքնատիպ ճարտարապետութեամբ ալիք առ ալիք կը տարածուի, կը հեռանայ ի փառս աշխարհի՝ մեծ Աւետիսը ծանուցանելով:

Չափազանց կը սիրեմ իր «Քրիստոս ի մէջ»-ը, ուր ժողովուրդը լուսնկալու իրարությունը կը փոխանակի: Իրեմ տուած «Ողջոյն»-ը, երածշտական նայու-ի լաշող կառուցով և յաջորդական խաղերով կը ստեղծուի շարժում, իրարանցում, փոխանցում, իրարայաջորդ մուտք բոլոր ձայնական խմբաւորումներու և նոյն մէկ չամրողացած մեղնին կը յայտնուի յաջորդին մէջ՝ տալով երածշտական կնճանակի պատկեր մը:

Արդէն ինքն ալ մասնաւորապէս կը ծանրանայ այս «համարին» և նոյն կը գործածէ: Քօլիֆօնի, բազմաձայնութիւնն բարոր, պահնըն թէ: Երկու և աւելի ինքնուրդուն նկարազրի մեղնիական գիծերու միաւոնք գործածութիւն - *contrepoint* - և թէ: նայու-ի բազմաձայն երածշտական երկ, երեք կամ չորս ձայնով, հիմնուած նմանակումի վրա:

«Սուրբ, Սուրբ». լուգիչ, զգայուն, երկնային և «Ովսաննա»-ներու նոյնական յաջորդարար կրկնուած չորս ձայնախումբերէն, աղաղակներու նման կը բարձրանան երկինք:

Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, «Ցամենայնի օրինեար»-էն «Հոգի Աստուծոյ» շարք նեզասահի է, հանելի և նեշտապուր:

«Ամէ՛ս, և ընդ հոգուոյ քում». դարձնալ զգայուն, աղերսական, մեղնիական յացում մըն է, զոր Վեհափառ Վազգէն Ա. կը սիրէր իմանալ զանազան համեյստութեանց ընթացքին, ինչպէս նաև Արա, Պարթևեանի «Մայր և Կոյս»-ը՝ երգուած հանգուցեալ Լուսին: Զարարեանի կողմէ:

Խնացեալ շարքին մէջ չափազանց թիչ կը գտնեմ ինձի նորութիւն չքերոյ հատուածներ: Իսկ «Տէր, ողորմեա»-ն թախանձազին, ունի թոյշը, և վերշապէս «Եղիցի»-ն ուրախ է, փայլուն, կեանքու և նոյն:

Խորէն Մէջիսանէնեան քանի մը տարիէ: ի վեր նիւ Եսորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարին ունենալու de chapelle-ն է և մէծ աշխատանք կը տանի Միացեալ նահանգներու արևելեան պահին վրայ, ի բաց առեալ Պուրունի շրջանը:

Կը յուսամ, թէ կարողացաւ զաղափար մը տալ ու ծանօթացնել սոյն Պատարագը, որպէսզի աւելի զանազանութիւն, նոխութիւն ու հարատութիւն բերենք Հայաստանեայց Անոարեկական Եկեղեցին ներս: Կը խորինմ, որ պէտք չէ վախճակ նորութիւններ բերելէ, կարծելով որ կրնայ խրտչեցնել մաս մը հաւատացեալներ: Կարելո՞ւ ապազան ու երիտասարդութիւնն է, որ կարելի պիտի ըլլայ նոր սերումդը մօտեցնել Եկեղեցին և անոր ընամէջէ՛ն հոգևոր երածշտութեան:

Ուրեմն, 1700-ամեակը թող ըլլայ 21-րդ դարու սեմին Հայ Սրբազան հոգևոր և եկեղեցական երածշտութեան նոր Ռակեդարի մը սկիզբը:

Փարիզ, Փետրուար 1998

Մանօթ.- Երածշտական բառերու, եզրերու հայերէն բարզմանութիւններու և սամսանումներու համար օգտագործած եմ Փարիզի Մայր Տաճարի երգախումբի ղեկավար Կոմիտաս Գէորգեանի «Երածշտական բառարան»-ը: